



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ 1129/02/10թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Հ.Աբրահամյան

Քաղաքացիական գործ թիվ 1129/02/10թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2011թ.փետրվար 8-ին

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.
նախագահությամբ՝ դատավոր Շ.Օհանյանի
դատավորներ՝ Գ. Հարությունյանի
Ի.Կարապետյանի

Դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Ասկինա Գրիգորիի Ղարաբեկյանի ընդդեմ Ռոբերտ Արարատի Խաչատրյանի՝ 279.216 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. նոյեմբերի 30-ի որոշման դեմ հայցվոր Ասկինա Ղարաբեկյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվորը դիմելով դատարան հայտնել է, որ երկու ամիս ժամկետով պատասխանողին ստացականով 2008թ. հունիսի 10-ին 600 ԱՄՆ դոլլար և 5000 ՀՀ դրամ՝ (ընդհանուրը՝ դրամի փոխարժեքով 221600 ՀՀ դրամ) գումարի պարտք է տվել, սակայն մինչև օրս պատասխանողը գումարը չի վերադարձրել: Խնդրել է Ռոբերտ Խաչատրյանից հօգուտ իրեն բռնագանձել 279216 (երկու հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, որից՝ 221600 (երկու հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամը՝ որպես պարտքի գումար, 57616 (հիսունյոթ հազար վեց հարյուր տասնվեց) ՀՀ դրամը՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքով հաշվարկված տոկոսագումար (ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 411), տոկոսագումարները բռնագանձելով մինչև

պարտքի գումարի փաստացի մարումը, ինչպես նաև մուծված 5584 (հինգ հազար հինգ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ պետտուրքի գումարը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան) 2010թ. հոկտեմբերի 11-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 276307 (երկու հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր յոթ) ՀՀ դրամի չափով:

Վճիռը վերաքննության կարգով բողոքարկել է պատասխանողը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 2010թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է. ամբողջությամբ բեկանվել է առաջին ատյանի դատարանի թիվ 1129/02/10թ. քաղաքացիական գործով 2010թ. հոկտեմբերի 11-ի վճիռը և փոփոխվել: Ասկինա Ղարաբեկյանի հայցը մերժվել:

Գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվորը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Վերաքննիչ դատարանը սխալ է հանգել եզրահանգման, որ առաջին ատյանի դատարանը կամայական է մեկնաբանել պատասխանողի կողմից ներկայացված ստացականը, իսկ արդյունքում խախտվել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները, և շրջանցել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ սահմանված դրույթի կիրառումը, ինչը հանգեցրել է գործի ոչ ճիշտ լուծմանը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Պատասխանողը չի կատարել պարտավորությունը, եթե կատարած լիներ ստացականը չէր գտնվի պարտատիրոջ մոտ: Պատասխանողը չի ապացուցել ստացականի վերադարձման անհնարինության հանգամանքը, ստացականի վրա նշում չկա պարտավորության կատարման մասին: 02.09.09թ. դրությամբ պատասխանողը 300000 ՀՀ դրամ՝ որպես պարտքի գումար չի վերադարձրել, եթե գումարը վերադարձրած լիներ, նա կկասեցներ կատարումը: Հետևաբար, վերաքննիչ դատարանը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջներին համապատասխան, ճիշտ եզրահանգման չի եկել ու դրա արդյունքում թույլատրելի ապացույց է դիտել պատասխանողի կողմից գրված ու ներկայացված ստացականը:

Պարտապանի ներկայացրած ստացականի և գործի փաստերի միջև առկա են անհամապատասխանություններ, դրանք հիմք էին վերաքննիչ դատարանին եզրահանգելու, որ տվյալ ստացականը կեղծ և շինծու էր ու չէր բխում օրենքի պահանջներից, իսկ հակասությունները կայանում էին նրանում, որ իբր վերադարձված գումարները ՀՀ դրամով են նշված, փոխառության գումարը մաս առ մաս վերադարձնելու, այդ գումարից տոկոսներ հաշվարկելու և այլնի վերաբերյալ պայմանավորվածություն չի եղել:

Նշված հանգամանքների առկայության պայմաններում վերաքննիչ դատարանն անհիմն է հանգել եզրակացության, որ պատասխանողը կատարել է իր պարտավորությունը:

2. Ստորադաս դատարանը անհիմն հղում է կատարել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջներին.

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկով.

Վերաքննիչ դատարանն իր ընդունած որոշման մեջ որևէ պատճառաբանված եզրահանգում չի արել, թե ինչու՞մն է կայանում առաջին ատյանի դատարանի թույլ տված ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների խախտումը:

Վերոգրյալների հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջովին բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի 30.11.2010թ. թիվ 2229/02/20թ. որոշումը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի 11.10.2010թ. թիվ 1129/02/10թ. վճռին կամ գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Գործում առկա 2008թ. հունիսի 10-ի ստացականի համաձայն՝ պատասխանող Ռոբերտ Խաչատրյանը հայցվոր Ասկինա Ղարաբեկյանից ստացել է 600 (վեց հարյուր) ԱՄՆ դոլլար և 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ երկու ամիս ժամկետում վերադարձնելու պայմանով.

2. Գործում առկա 2009թ. սեպտեմբերի 2-ի ստացականի համաձայն՝ Ասկինա Ղարաբեկյանը Ռոբերտ Խաչատրյանին տրված գումարի դիմաց գումարները վերցրել է հետևյալ հերթականությամբ. 2008թ. դեկտեմբերին՝ 70000, 2009թ. հուլիսի 20-ին՝ 40.000, 2009թ. օգոստոսի 25-ին՝ 50000, 2009թ. սեպտեմբերի 2-ին՝ 50000: Նույն ստացականի համաձայն մնացել է %-ի հաշվարկը:

4. ԼՂՀ Գերագույն դատարանի (այսուհետ՝ Գերագույն դատարան) պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ՝

1/ Բողոքն առաջին հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի համաձայն՝

1. Պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:

2. Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

Եթե պարտապանն ի հավաստումն պարտավորության պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ դրա անհնարինության դեպքում այդ մասին նշի իր տված ստացականում: Ստացականը կարող է փոխարինվել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ:

Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հաստատում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցվել:

3. Պարտատիրոջ կողմից ստացական տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ այն վերադարձնելու անհնարինության մասին ստացականում նշելուց հրաժարվելու դեպքում, պարտապանն իրավունք ունի կասեցնել կատարումը:

Այդ դեպքում պարտատերը համարվում է կետանցող:

Նոդվածի շարադրանքից հետևում է, որ պարտավորությունների կատարման ապացույց են հանդիսանում պարտատիրոջ կողմից պարտապանին տված ստացականը կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին, պարտքային փաստաթուղթը պարտապանին վերադարձնելը, իսկ դրա անհնարինության դեպքում այդ մասին իր տված ստացականում արված նշումը և վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արված մակագրությունը պարտավորության կատարումը ստանալու մասին:

Նշվածներից մեկի առկայությունը բավարար պայման է՝ փոխառության պայմանագրով ծագած պարտավորությունը լրիվ կամ մասնակի ստացած համարելու համար:

Գործի նյութերից հաստատված է, որ՝ հայցվոր Ասկինա Ղարաբեկյանը, ի հավաստումն իր ու պատասխանող Ռոբերտ Խաչատրյանի միջև կնքված փոխառության

պայմանագրի ու դրա պայմանների, առաջին ատյանի դատարանին ներկայացրել է 2008թ. հունիսի 10-ին Ռոբերտ Խաչատրյանի կողմից կազմված և ստորագրված ստացականը, ըստ որի՝ Ռոբերտ Խաչատրյանն Ասկինա Ղարաբեկյանից ստացել է 600 (վեց հարյուր) ԱՄՆ դոլլար և 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ՝ երկու ամիս ժամկետով: Իսկ պատասխանող Ռոբերտ Խաչատրյանը, որպես 2008թ. հունիսի 10-ի ստացականով ստանձնած պարտավորության կատարման մասին վկայող ապացույց, առաջին ատյանի դատարանին է ներկայացրել 2009թ. սեպտեմբերի 2-ին կազմված և Ասկինա Ղարաբեկյանի կողմից ստորագրված ստացականը, համաձայն որի՝ Ասկինա Ղարաբեկյանն Ռոբերտ Խաչատրյանին տված գումարի դիմաց ստացել է գումար՝ հետևյալ հերթականությամբ. 2008թ. դեկտեմբերին՝ 70.000, 2009թ. հուլիսի 20-ին՝ 40.000, 2009թ. օգոստոսի 25-ին՝ 50.000, 2009թ. սեպտեմբերի 2-ին՝ 50.000: Նույն ստացականի համաձայն՝ մնացել է տոկոսի հաշվարկը:

Փոխառության պայմանագրով նախատեսված պարտքի համապատասխան մասի կատարումը ստանալու մասին հայցվորի տված ստացականը, Գերագույն դատարանը ապացույց և հիմք է համարում պատասխանող Ռոբերտ Խաչատրյանի կողմից պարտավորությունը ստացականում նշված գումարի չափով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կատարված համարելու համար:

Հետևապես, Գերագույն դատարանը գտնում է, որ 02.09.2009թ. Ասկինա Ղարաբեկյանի տված ստացականում նշված գումարի չափով Ռոբերտ Խաչատրյանը կատարել է 10.06.08թ. փոխառության պայմանագրով նախատեսված իր պարտավորությունը Ասկինա Ղարաբեկյանի հանդեպ:

Վերը նշված հիմնավորումներով անհիմն է վճռաբեկ բողոքի այն պատճառաբանությունները, որ ստացականը պարտատիրոջ մոտ գտնվելը, ստացականի վրա պարտավորության կատարման մասին նշում չկատարելը հիմք են փոխառության պայմանագրով ծագած պարտավորությունը չկատարած համարելու համար:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օտարերկրյա արժույթը և արժույթային արժեքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կարող են փոխառության պայմանագրի առարկա լինել նույն օրենսգրքի 142-րդ, 143-րդ և 356-րդ հոդվածների կանոնների պահպանմամբ:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 356-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դրամական միավորը Հայաստանի Հանրապետության դրամն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում Հայաստանի Հանրապետության դրամն անվանական արժեքով պարտադիր ընդունման համար օրինական վճարամիջոց է: Դրամական պարտավորությունները պետք է արտահայտվեն Հայաստանի Հանրապետության դրամով:

Գերագույն դատարանը գտնում է, որ դրամական պարտավորությունները Հայաստանի Հանրապետության դրամով կատարելը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 142-րդ և 356-րդ հոդվածների պահանջն է: Հետևապես, անհիմն է վճռաբեկ բողոքի պատճառաբանությունն այն մասին, որ պարտավորությունը դրամով կատարելու մասին կողմերի միջև պայմանավորվածություն չի եղել:

2/ Բողոքը երկրորդ հիմքով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող,

ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝ գրավոր և իրեղեն ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Գերագույն դատարանը գտնում է, որ ինչպես փոխառության պայմանագիրը, այնպես էլ պայմանագրով ծագած պարտավորության համապատասխան մասի կատարումը ստանալու մասին տրված ստացականը իրավահարաբերության կողմերը ձեռք են բերել և ներկայացրել դատարանին ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված կարգով և հանդիսանում են հավաստի, արժանահավատ ապացույցներ, թույլատրելի և վերաբերելի են և գործով էական նշանակություն ունեն վեճի լուծման համար:

Նման հանգամանքներում վերաքննիչ դատարանը ճիշտ է հանգել այն հետևության, որ հայցվոր Ասկինա Ղարաբեկյանը ընդունելով 2008թ. հունիսի 10-ի ստացականով Ռոբերտ Խաչատրյանի կողմից ստանձնած փոխառության պայմանագրի կատարումը, վերջինիս պահանջով նրան տվել ստացական՝ կատարումը համապատասխան մասով ստանալու մասին և վերաքննիչ բողոքը բավարարել:

Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի մյուս պատճառաբանություններին չի անդրադառնում, քանի որ դրանք գործի էլքի վրա չեն ազդել և գործի լուծման համար էական նշանակություն չունեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ասկինա Ղարաբեկյանի վճռաբեկ բողոքը մերժել: Վերաքննիչ դատարանի 2010թ. նոյեմբերի 30-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Շ.ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ